# ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

## ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍԻՆ

Հայաստան-Սփյուռք առնչությունների հիմնահարցը միշտ էլ առաջնահերթություն է եղել փասնամյակներ շարունակ սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման բեռն իր ուսերին կրող Հայ եկեղեցու համար: Հիմնահարցը միանգամայն նոր շունչ եւ նոր որակ է ստացել մեր օրերում՝ Հայաստանի անկախ Հանրապետության հռչակումից հետո, որի արդյունքում Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերության եւ սփյուռքահայության ազգապահպանության հարցերը դարձան պետական հոգածության առարկա[1]: Նշված դրական տեղաշարժերով հանդերձ Սփյուռքի եւ սփյուռքահայության հիմնահարցերը այսօր եւս շարունակում են առաջնահերթություն հանդիսանալ ինչպես ազգային պետականության, այնպես էլ՝ Հայ Եկեղեցու համար:

Բավականին պարողունակ եւ բազմահարթ իրականություն լինելով՝ հայկական սփյուռքը եւ նրա հետ կապված հիմնահարցերն աչքի են ընկնում բովանդակային բարդությամբ: Այդ իրողությամբ է պայմանավորված նաեւ Սփյուռքի եւ Հայրենիք-Սփյուռք առնչությունների վերաբերյալ ազգընտիր Վեհափառ Հայրապետի հայեցակարգային մոտեցումների ուղղվածությունը, որը, դատե-

1 Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունն ամբողջացնելու եւ արդյունավետ իրականացնելու, այդ բնագավառում պետական քաղաքականությունը համակարգելու եւ շարունակաբար կատարելագործելու, ինչպես նաեւ պետական մարմինների գործունեությունը համակարգելու նպատակով 2008 թ. հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության կազմում սկսել է գործել սփյուռքի նախարարությունը: Այն Հայաստանի Հանրապետության նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում եւ իրականացնում է Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման, ազգային, հասարակական քաղաքական, հայրենակցական եւ այլ կառույցների հետ գործակցության զարգացման, հայապահպանության, Սփյուռքի ներուժի հայտնաբերման, հայրենադարձության ծրագրերի մշակման, Հայաստանի եւ հայ ժողովրդի վարկանիշն ամրապնդող համահայկական նպատակային այլ ծրագրերի եւ նախարարության իրավասությանը վերապահված այլ բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

լով փաստական նյութից, համակարգված լուծումներ է առաջադրել պատմական, գործառնական, հասարակական-քաղաքական, հոգևոր, միջքաղաքակրթական, միջմշակութային և այլ ոլորտների հիմնախնդիրների ընդհանրացնող վերլուծության հիման վրա: Վերլուծական նյութի բազմապլանությունը Վեհափառ Հայրապետին մի կողմից թույլ է տվել հիմնահարցերի լուսաբանությանն անդրադառնալ հայեցակարգային համակարգված ու ամբողջական տեսքով, իսկ մյուս կողմից հիմք է դարձել պարզաբանելու, թե այդ լուծումները որքանով են համապատասխանում հայ ժողովրդի ինքօրինակ քաղաքակրթության հոգևոր չափանիշներին:

Այդ ամենով հանդերձ պետք է նկատել, որ Հայրենիք-Սփյուռք առնչություններին վերաբերող վերլուծաբանի աշխարհայացքային մոտեցումներում կարևոր և առաջնային պայման է Հայաստանի անկախ Հանրապետության և Հայ Առաքելական Եկեղեցու ներդաշնակ գործակցությունը: Քննարկվող հայեցակարգում Հայրենիք-Սփյուռք առնչությունների բոլոր հրատապ խնդիրների և հիմնահարցերի լուծումները շաղկապվում են նաև արտաքին աշխարհի և օտար քաղաքակրթությունների հետ բազմասպիճան կապերի ու փոխհարաբերությունների մեջ գտնվող հայկական սփյուռքի «կարիքներին», հավասարապես նաև այն բանին, թե այդ շարակարգում ինչ «առաջարկներ» են ներկայացնում Մայր Հայրենիքն ու Ազգային Եկեղեցին: Հայաստան-Սփյուռք առնչությունների ներդաշնակ ծավալման և վերջինիս փոփոխության դինամիկայի վերլուծական արժևորման գործընթացում մեծ դերակատարություն է վերապահվում նաև ազգային գաղափարախոսությանը:

Ինքնին հասկանալի է, որ Հայաստան-Սփյուռք առնչությունների հիմնահարցը բազմաշերտ է և բազմասպիճան: Դա, ինչպես Վեհափառն է նկատում, ամենից առաջ պայմանավորված է արտաքին աշխարհի և քաղաքակրթությունների ազդեցությամբ, այն բանով, որ՝«Աշխարհի տարբեր երկրներում ապաստանած տարագիր հայությունը ստիպված եղավ իր հոգևոր կյանքը վերակազմակերպել եղած հնարավորությունների համաձայն, միմյանցից տարբեր և հաճախ հեռացած կամ կորցրած ներեկեղեցական ավանդույթը»[2]: Միաժամանակ Վեհափառ Հայրապետի քննախույզ հայացքից չի վրիպում նաև այն իրողությունը, որ նշված առանձնահատկություններով պայմանավորված Սփյուռքը ներքնապես ակտիվ, համագործակցող և տարանջատ գործող համայնքների բավականին բարդ ու անկառավարելի ամբողջություն է, որի պատճառով այն բնութագրվում է իր տարամետ փոփոխություններով, զարգացման միտումներով, յուրատիպ հոգեբանությամբ ու խնդիրներով: Նա միաժամանակ փաստում

2 «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 35: Մի այլ առիթով Վեհափառ Հայրապետը փաստում է, որ նշված իրողությունների արդյունքում «Նոր մարտահրավերների առջև կանգնեց Հայ Եկեղեցին նաև Սփյուռքում». «Էջմիածին», 2008, Ե, էջ 11:

է նաև, որ չնայած այդ ընդհանրություններին և տարբերություններին, սփյուռքը հայության բեկորներից հավաքբով շաղախված, թանկ ու հարազատ «փոքր Հայրենիք» է: Եւ այդ ամենն իմաստավորվում է հետևյալ տողերով. «Հայոց Սուրբ Եկեղեցուց աղբիւրացող հաւատով կեանք առած աշխարհասփիւռ հայ հոգիները հաւատով դարեր են կամրջել՝ հաստատուն ու կենսունակ պահելով մարդկային այն առանձնայատուկ ընդհանրութիւնը, որ «ազգ» և «ազգային» ենք կոչում: Հաւատն է ոգեշնչել ու թեւ տուել մեզ, մեր բոլոր յաղթանակներին»:[3]

Գարեգին Բ. Կաթողիկոսի հայեցակարգում պատմականության սկզբունքի հետևողական կիրառմամբ ցույց է տրվում, որ սփյուռքահայության՝ հասարակական, քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական-մշակութային տարբեր միջավայրերին հարմարվելը, համակեցության ու մերձեցման գործընթացներն ինքնին հասկանալի պատճառներով ազգային համայնքներում ծնել է տարբեր կենսապայմաններ և դրանց համապատասխանող պատկերացումներ ու արժեքային տարբեր համակարգեր: Եւ չնայած այդ բազմազանությանը՝ նա փաստում է նաև, որ սփյուռքահայության ազգային կյանքում մեծ և «անպայմանավոր» ազդեցություն է ունեցել և ունի «նախնիների կանչը», որի ազգեցությամբ ամենուր նույնական է Մայր Հայրենիքի և Հայ Եկեղեցու նկատմամբ նվիրական մոտեցումը: Եւ քանի որ հավատացյալի համար պայմաններից անկախ կրոնական արժեքներն ու հավատավոր կյանքն անփոփոխ կերպով առաջնային նշանակություն ունեն, Վեհափառն այդ իրողության ընդհանրացմամբ գրում է, որ երբ «նվաճողների սրից ու բռնություններից հալածական մեր ժողովրդի զավակները տարբեր ժամանակներում ստիպված են եղել հեռանալ Հայրենիքից ու հաստատվել այլ երկրներում», ունեցած պարտքի գիտակցումով «Աստծուց իրեն վստահված ժողովրդի հետ աշխարհացրիվ է եղել նաև Հայ Առաքելական Եկեղեցին՝ հովվելով իր հոտը, որպեսզի ապրելով տարբեր կրոնների ու մշակույթների հետ կողք-կողքի, պահպանեն քրիստոնեական մեր սուրբ հավատը, որ ժառանգություն ունենք մեր հայրերից, ազգային արժեքներն ու ավանդները և մնան միաբան՝ իբրև ժողովուրդ Քրիստոսի՝ Հայ Առաքելական Եկեղեցի: Արտերկրում մեր Եկեղեցու շատ թեմեր ունեն հարյուրամյակների պատմություն, ստեղծել են հարուստ ու ծաղկուն մշակույթ՝ իրենց կարևոր նպաստը բերելով այդ երկրների կյանքին ու առաջընթացին»[4]:

Չափազանց արժեքավոր և Վեհափառ Հայրապետի հայեցակարգին հոգեհարազատ է նաև այն, որ Սփյուռքի ամբողջացման և հայապահպանության գործում մեծապես կարևորվում է արտերկրի ազգային կուսակցական, հասարակական, հայրենակցական, մշակութային և զանազան այն կառույցների

3 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Հայրենիքի պաշտոնականք, Ս. Էջմիածին, 2010, էջ 179:
4 «Էջմիածին», 2004, Զ, էջ 14:

դերը, որոնք անուրանալի լուման են ներդրել այդ գործում: Սակայն նրա համար աներկբա է, որ այդ գործընթացի առաջապարն ու շարժիչ ուժը եղել է Հայ Եկեղեցին: Ահա թե ինչու Վեհափառի հայեցակարգում հավաստվում է, որ «**Մեր ժողովուրդը եղավ բազմաչարչար, բայց նաև, բազմահաղթ, որովհետև կարողացավ ամուր մնալ Քրիստոսի սիրո ճանապարհներին**, կարողացավ իր հանդեպ գործված չարիքները բարիով հաղթահարել՝ ստեղծելով ու կառուցելով: Այսօր էլ հայը, ո՛ր երկրում էլ որ լինի, մշակում ու ծաղկավետ է դարձնում այդ երկիրը, իր կորովն ու եռանդն է ներդնում այդ երկրի բարգավաճման, մշակույթի զորացման և ձեռքբերումների ամրագրման գործին»[5]: Այդ տրամաբանության շրջանակներում բնութագրական պետք է համարել նաև այն հավաստումը, թե «hանձին Հայոց Հայրապետի սփյուռքահայությունը տեսնում է Էջմիածինը, իսկ Հայոց Հայրապետը Էջմիածինը տեսնում է դավանորդներով»: Ուստի վերլուծաբան Հայրապետն արձանագրում է նաև այն փաստը, որ «**Հայի համար Ս. Էջմիածինը Տաճար չէ միայն, այլ հայոց հավատի ու հայ ինքնության աննյութական ոգեղեն մի ներկայություն, որին հաղորդ ենք դառնում միմյանց հանդիպելով** ... **որովհետև ուր մի հայորդի, այնտեղ՝ Ս. Էջմիածին**»[6]:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների Վեհափառի հայեցակարգում հստակորեն ուրվագծվում է նաև այն համոզմունքը, որ սփյուռքահայության ինքնության ճանաչողությունը և ազգային ինքնագիտակցության պահպանումը լիակատար չի կարող լինել առանց «նախնյաց կանչին» ականջալուր լինելու, առանց հայ ինքնության, ազգամշակութային արժեքների պահպանման հոգևոր հիմքի: Այդ հավատով է շաղախված եղել նաև Հայրենիք-Սփյուռք կապը: Սակայն մեկ քայլ ավելին անելով ազգընտիր Նվիրապետը փաստում է, որ **սփյուռքահայության կյանքը չի կարող և չպետք է խարսխվի միայն պատմականության գիտակցության վրա**: Պատմականությունը չափազանց կարևոր գործոն է, գտնում է Վեհափառը, բայց չի կարելի այն շաղկապել միայն անցյալի հետ: Պատմությունը նաև իղձերով ու երազներով հյուսված այսօրվա կյանքն է, գրում է նա և մատնանշում, որ **պատմականության զգացումը պետք է ծառայի անցյալի միջոցով ներկայի իմաստավորմանը՝ իր ամենօրյա հարաբերություններով**: Եվ եթե պատմական փաստ է, որ «նախնիների կանչին» հավատարիմ «Սփյուռքի մեջ ամեն հայ համայնք, որ կառուցում է իր եկեղեցին, կառուցում է իր Սուրբ Էջմիածինը և նրա խորանի առջև Լուսավորչի Կանթեղ է կախում՝ խորհրդանիշը իր կենդանի հավատքի, - ապա բնական է նաև այն հետևությունը, որ, - Հայոց Եկեղեցին երաշխիքն է մեր հայ գոյության՝

5 «Էջմիածին», 2004, Ե, էջ 34:
6«Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 12:

իբրեւ Քրիստոսի հավատավոր ժողովուրդ»[7]: Այդ ամենով հանդերձ Գարեգին Բ Վեհափառը նույնքան աներկբա է համարում նաեւ «նախնիների կանչի» հիմքում ընկած մի այլ իրողություն՝ ազգային նվիրական իղձերի ու երազանքների իրականացումը Հայրենիքում՝ Մայր Հայաստանում: Դրանով է պայմանավորված այն պնդումը, որ **«Արդարության հավատով իր կորուստների ցավը մեր ժողովուրդը զորության փոխեց ու այսօր վերածնված՝ Եվրոպայից Ասիա, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայից Աֆրիկա եւ Ավստրալիա ապրում է հայացքն Արարատին եւ նորանկախ իր հայրենիքին, ապրում է հայրենյաց սիրով ու իր նոր կյանքի հույսերով**»[8]:

Այդ ամենից դժվար չէ հետեւեցնել, որ Վեհափառ Հայրապետի հայեցակարգային մոտեցումներում պատմականության սկզբունքը, ավելի ճիշտ՝ սփյուռքահայության պատմականության զգացումը մեկնաբանվում է որպես ազգային անցյալը եւ ներկան շաղկապող գործոն, որը միաժամանակ միտված է նաեւ ապագային՝ իր ծիրում ներառելով հայրենիք-սփյուռք առնչությունների փեսլականը: «**Դարեր շարունակ, թեկուզ՝ բարվոք պայմաններում, թեկուզ՝ դժվարին, Սփյուռքը եթե ապրել է ու պահպանվե**լ, - այդ կապակցությամբ գրում է Վեհափառը, - **ապա իր՝ Հայրենիքը ազատ տեսնելու եւ Հայրենիք վերադառնալու կարոտով**»[9]: Այդ հիման վրա է նաեւ, որ «պատմականության զգացումը» մեծ դեր է կատարել հյուրընկալող երկրների, ժողովուրդների եւ մշակույթների նկատմամբ սփյուռքահայության կենսակերպի մշակման գործում, ինչը նույնպես բնութագրվում է իբրեւ ինքնօրինակ շրջադարձ դեպի սեփական արմատները եւ հայրենիքը: Վերլուծական այդ նախադրյալներին լիովին համահունչ է Վեհափառ Հայրապետի եզրակացություն-պնդումը, թե «Այս տեսիլքով, այս հավատով ու գիտակցությամբ հայկական գաղթօջախներում... մեր նախնիք շարունակեցին եկեղեցիներ կառուցել, դպրոց եւ մշակութային հաստատություններ բացել, գրքեր տպագրել, գիտություն ու արվեստ զարգացնել: Հեռավոր Հնդկաստանից մինչեւ Եվրոպա ու Ամերիկա շնչեց ու ապրեց հայ կյանքը, ծաղկեց հայ մարդու ստեղծագործ տաղանդը: **Հայ լինելը միայն օգնեց մեր ժողովրդի զավակներին հարգված ու վստահելի անդամները դառնալու իրենց ընդունած երկրների, ազնվորեն ծառայելու իրենց նոր Հայրենիքների տնտեսությանն ու հասարակական կյանքին, իսկ հարկ եղած ժամանակ՝ հավատարմորեն պաշտպանել նրանց ազատությունը**»[10]:

Հայրապետը վստահ է, որ հայոց անցյալն ու ապագան շաղկապող պատ-

---

7«Էջմիածին», 2001, ԺԲ, էջ 12:

8 «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 32:

9 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հայրենիքը պաշտոնականք, էջ 270:

10 Անդ, էջ 265:

մականության զգացումի շնորհիվ կոփորակված սփյուռքահայ համայնքները ներքին կազմակերպվածությամբ իրենց «երկրորդ հայրենիքներում» ոչ միայն կարողացան հասարակական-քաղաքական, փնփեսական ու մշակութային կյանքի լիիրավ անդամ դառնալ, այլեւ միանգամայն նոր դեր ու նշանակություն ձեռք բերեցին նաեւ գիփակրթական ու մշակութային կյանքում: Եւ այդ իրողությունների առարկայական ու անկողմնակալ վերլուծությամբ Հայրապետը հավասփում է, որ «Հայորդյաց ազնվության ու առաքինության, ջանասիրության ու նախաձեռնողության շնորհիվ Սփյուռքի մեր գաղթօջախներն ու համայնքները հարգանք ու վստահություն են ձեւավորել մեր ժողովրդի հանդեպ»[11]: Այդ ամենին զուգընթաց Գարեգին Բ Կաթողիկոսը հոգեւոր եւ պատմական իրողությունների համակողմանի վերլուծությամբ ուրվագծում է սփյուռքի միանգամայն նոր համայնապատկեր: Չնայած այն բանին, գրում է նա, որ հայկական Սփյուռքը ձեւավորվել է «Հայ ժողովուրդը ոչնչացնելու եւ նրա անունը երկրի երեսից իսպառ ջնջելու» քաղաքականության արդյունքում, որի հետեւանքով «... իբրեւ անեծք աշխարհացրիվ սփռեցին մեր ժողովրդին»[12], պատմականության գիտակցության եւ ազգամշակութային ինքնափիպության շնորհիվ աշխարհացրիվ հայկական Սփյուռքը նպատակադիր գործունեությամբ հայտնի սահմաններում ազգային ամբողջական տեսք է ստացել: Այդ ամենի կարեւորության գիտակցությամբ Հայոց ազգընտիր Հայրապետն արձագանքում է նաեւ այն փաստին, որ սփյուռքահայության ազգապահպանության, համախմբման, ազգային կառույցների ձեւավորման, հայ ոգու պահպանման շնորհիվ է, որ ի հեճուկս հայակործան քաղաքականության նկրտումների, հայկական «**Սփյուռքը նոր օրհնություն դարձավ հայ կյանքին**»[13], որով միանգամայն նոր շունչ հաղորդեց հայ իրականությանը: Եւ այդ ամենը բարոյական ապպակ համարելով հայապդյաց քաղաքականությանը, սփյուռքահայերին դիմելով, Վեհափառ Հայրապետը գրում է. «Թ-շնամու չար այս մփածումը դուք, սիրելի հայորդիք, ձեր հավատքով, **առ Աստված ունեցած ձեր վստահությամբ կարողացաք օրհնության վերափոխել**: **Սփյուռքի հայ գաղթօջախները, արդարեւ, այսօր օրհնության ակունք են մեր հայրենական կյանքի համար**, **մեր ողջ ժողովրդի համար**»[14]:

Փաստական նյութի վերլուծությունը աներկբա ցույց է տալիս, որ ընդհանրական այդ հենքի վրա են խարսխվում նաեւ Հայրենիք-Սփյուռք առնչությունների եւ հայ ժողովրդի երկու հատվածների համագործակցության վերաբերյալ

11 «Էջմիածին», 2004, Ե, էջ 34:

12 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Հայրենիքի պաշտոնականք, էջ 267:

13 Անդ:

14 «Փառք Բարձրյալին,- այդ կապակցությամբ գրում է Վեհափառը, - Սփյուռքը նոր օրհնություն դարձավ հայ կյանքին՝ հակառակ որ իբրեւ անեծք աշխարհացրիվ սփռեցին մեր ժողովրդին». **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Հայրենիքի պաշտոնականք, էջ 75:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայեցակարգի արժեքային այլ մոտեցումները եւս: Ի մասնավորի, անդրադառնալով Հայաստան-Սփյուռք արդյունավետ համագործակցության հիմնահարցի արժեւորմանը, Գարեգին Բ. Հայրապետն այդ գործընթացի ուղեգիծ է համարում սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման, հասարակական ու ազգային կյանքի կայունության ապահովմանը միտված գործունեությունը, ինչպես նաեւ այդ գործընթացում Մայր Հայաստանի դերակատարությունը: Ընդ որում, ելակետային է այն համոզմունքը, որ «**Ուր էլ ապրենք, մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, Հայ Առաքելական մեկ Եկեղեցու**: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ եւ որպես հայ»[15]: Հոգեւոր, պատմական եւ ազգահոգեբանական նշված իրողությունների համակարգված վերլուծությամբ էլ կառուցվում եւ մեկնաբանվում են Հայրենիք-Սփյուռք առնչությունների մասին Գարեգին Բ Վեհափառի համակողմանի հիմնավորված լուծումները: Եւ որ ամենակարեւորն է, այս հարցում ազգընտիր Հայրապետն ամենեւին չի սահմանափակվում զուտ տեսական կամ վերացական մոտեցումների շարադրմամբ: Դատելով փաստական նյութից՝ նրա համար Հայրենիք-Սփյուռք առնչությունների հիմնահարցը արժեւորվում է հատկապես գործնական նշանակության դիրքերից: Եւ այն փաստը, որ իր գահակալության շրջանում Գարեգին Բ Հայրապետը հովվապետական այցելություններ է կատարել սփյուռքահայ բոլոր թեմեր, արդեն այն բանի խոսուն վկայությունն է, թե նա որքանով է կարեւորում Մայր Աթոռի եւ սփյուռքահայության կապերը: Ահա թե ինչու վաստակած իրավունքով նա նաեւ փաստում է. «Մենք, ականջալուր մեր հարյուր երեսունմեկ Հայրապետներին, ականջալուր Երկնավոր մեր Հայր Աստծո կոչին, Հովվապետի գավազանը Մեր ձեռքին՝ այցելեցինք Սփյուռքի Մեր զավակներին: Այցելեցինք հայ գաղթօջախներ՝ Հյուսիսային Ամերիկայից սկսյալ մինչեւ Աֆրիկա ու Հեռավոր Արեւելք, որպեսզի հագեցնենք պապակը կարոտաբաղձ Մեր զավակաց հոգիների, **որպեսզի զորացնենք նրանց մեջ հավատքը եւ վառենք ջահը հույսի ու լավատեսության դեպի մեր ժողովրդի պայծառ գալիքը**»[16]: Նույն շարժառիթներով է թելադրված նաեւ համայն հայությանն իր սրտի խոսքին հաղորդակից դարձնելու հետեւյալ հավաստումը. «**Մենք աղոթք բարձրացրեցինք**

15 «Էջմիածին», 2001, Ե, էջ 32:

16 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 30: Այդ առնչությամբ ավելի քան ուսանելի է Վեհափառ Հայրապետի հովվապետական այցերի վերաբերյալ սփյուռքահայության հետեւյալ գնահատականը. «... մեր ներկայ Հայրապետին հովուական այցելութիւնները թեմերուն մեծապէս օգտակար հանդիսացած են ժողովրդին մէջ հոգեւոր արթնութիւն յառաջացնելու, հայորդիներ եկեղեցւոյ շուրջը խմբելու, Հայ ժողովուրդը, Հայաստանը եւ Հայց. Եկեղեցին պեղույն օտար հասարակութեան ծանօթացնելու եւ այդ բոլորէն անդի՝ աշխարհացրիւ հայորդիներու ուշադրութիւնը կեդրոնացնելու Հայրենիքի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրայ՝ թէ՛ բարոյապէս եւ թէ՛ ալ նիւթապէս», «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 6:

**Սփյուռքի հայ կյանքի զորացման համար, որպեսզի ապրի աշխարհասփյուռ ազգս հայոց հասպատուն Լուսավորչի սուրբ աջին եւ զորացյալ կանթեղի լույսով լուսավորչահասպատ**»[17]:

Փաստերը վկայում են, որ Հայրենիք-Սփյուռք առնչությունների բնականոն ծավալման վերաբերյալ Վեհափառ Հայրապետի արժեքային մոտեցումների հիմքում ընկած է երկկողմանի ազատ եւ անկաշկանդ հարաբերություններ ծավալելու առաջնահերթության ըմբռնումը: Այդ եզրակացությունը հիմնավորելու լուսաբանող օրինակը Վեհափառի հետեւյալ փողերն են. «**Մեր ապագան Հայրենիքի եւ Սփյուռքի ներշաղախ ընթացքն է: Մենք մեկ առաքելություն ունենք ու մեկ ճանապարհ**: Միասին պիտի փքենք, որ արագափոփոխ մեր ժամանակներում Հայրենիքն ու Սփյուռքը, հզոր, ազդեցիկ ու կենսունակ, նեցուկ լինեն միմյանց: Արդարեւ, ի՞նչն է պակասում մեզ, պատմության օրինա՞կը, թե՞ դասը, երկիր շենացնելու եւ մշակույթ զարգացնելու փո՞րձը, հոգու կորո՞վը, թե՞ մտքի թռիչքը»[18]: Արժեքային այդ կողմնորոշման հիման վրա է կառուցվում նաեւ Մայր Հայաստանի եւ հայկական Սփյուռքի կամ որ նույնն է հայ ժողովրդի միասնականացման Վեհափառի ազգամիավորիչ ծրագիրը, որն անքակտելիորեն շաղկապվում է ազգի զարգացման բնական միջավայրի՝ Մայր Հայրենիքի գործառնական դերի հետ: Պետք է նկատել նաեւ, որ առաջադրված ծրագիրը կառուցվում է ինչպես պատմականության գիտակցության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ներկա իրողությունների համակողմանի քննական արժեւորման վրա, հաշվի է առնում ազգային առանձնահատկությունները բնորոշող բոլոր հիմնարար գործոնները եւ մերժում հիմնահարցի լուծումը կենցաղային հարթություն փոխադրելու սահմանափակ մոտեցումները: Հայաստան-Սփյուռք առնչությունների հիմնախնդիրների լուծմանը միտված ընդհանրացնող այդ դիրքերից էլ վերլուծաբան Կաթողիկոսը կոչ է անում հայրենասիրության, հոգու, սրտի, մտքի եւ հավատի միասնության, առանց որոնց չափազանց դժվար կլինի ազգային ինքնության պահպանումը, առանց որոնց իրական չի կարող դառնալ նաեւ հավատարմությունը հողի եւ արյան, հայրենի օջախի եւ հայրենիքի կանչին: Արժեքային մոտեցման այդ ձեւաչափին լիովին համահունչ է նաեւ Վեհափառի հորդորը. «**Թող ազգս հայոց՝ ի սփյուռս աշխարհի մեկ ու միասնական հայրենի պետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ, հավատա իր նոր կյանքի փառքը բացող արշալույսին**»[19]:

Փաստական նյութի վերլուծությունը վկայում է, որ համայն հայությանը միասնականության կոչելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորը հավասա-

17 «Էջմիածին», 2005, Զ, էջ 35:
18 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հայրենիքի պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 267:
19 Անդ:

բապես կարեւորում եւ հաշվի է առնում արմապական նշանակության կարեւորագույն այլ գործոններ եւս՝ հայ ժողովրդի պատմականության զգացումը եւ հայրենասիրությունը, հոգու, սրտի եւ մտքի միասնացման գիտակցումը, ինչպես նաեւ ազգային անկախ պետականության առկայությունը:

Հայրենիք-Սփյուռք գործակցության եւ կապերի ամրապնդման Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայեցակարգում Հայոց պետականության միավորիչ եւ ազգահավաք դերը մեծապես կարեւորվում է նաեւ այն համապեքստում, որ սփյուռքահայությանը դեռեւս չի հաջողվել մեկտեղել համայնքային համագործակցությունը: Ահա թե ինչու շեշտելով սփյուռքահայության կյանքի միասնության առաջնահերթությունը, նա անջատողական ցանկացած գործելակերպի հաղթահարման կարեւորագույն գործոն է համարում համազգային կյանքը միավորող ազգային պետականության դերը: Այդ փաստն են վկայում Վեհափառի հետեւյալ տողերը. «Որքան ջանքեր են թափել մեր նախնիք, զրկանքներ կրել, արյուն հեղել հայոց պետականության վերահաստատման ու պահպանության համար: Եռաբլուրն է վկան այն թանկ գնի, որ վճարեցինք մենք: Հազարավոր հայորդյաց շիրիմներ են հանգչում այդ բարձունքի վրա, յուրաքանչյուր շիրիմ Հայրենիքի մի ափ հող է, որ պաշտպանվեց նրանց կյանքով, մի գյուղ է, մի քաղաք, մի շեն: **Այսօր նրանց կյանքով նվաճված այդ շենի, գյուղի պահպանությունը դրված է մեզ, մեզ՝ Հայաստանում ապրող հայորդիներիս եւ Սփյուռքում ապրող հայորդիներիս, որովհետեւ ասացի եւ նորից եմ կրկնում՝ չկա Սփյուռքի հարատեւություն առանց Հայրենիքի**: Հայ ապրեք մեկ սերունդ, երկու սերունդ, բայց նպատակ պետք է լինի ապրելու համար, տեսիլք պետք է լինի հայ մնալու համար»[20]:

Համազգային այդ «տեսիլքը», Վեհափառի համոզմամբ, մեկ անգամ եւս փաստում է Հայաստանի եւ Սփյուռքի միասնական ճակատագրի, հավասարապես նաեւ համազգային իղձերի ու նպատակների միասնության հրատապությունը: Այդ առումով միանգամայն բնական է նաեւ Վեհափառ Հայրապետի հայեցակարգում հիմնավորված այն տեսակետը, որ ազգային պետականության վերահաստատումով հայոց միասնացումը միանգամայն որոշակի կերպարանք է ստացել այն պարզ պատճառով, որ «... **մեր Հայրենիքի ազատ կյանքի հետ վերազարթոնք է ապրում համայն մեր ժողովրդի հոգեւոր ու ազգային կյանքը**: Հայաստանի անկախությունը եւ Արցախի ազատագրությունը հնարավոր են դարձրել աշխարհասփյուռ հայության անկաշկանդ առնչությունները Հայրենիքի հետ, հնարավոր են դարձրել մեր միասնական կյանքի կառուցումը, միջոցների եւ ջանքերի համատեղումը՝ մարմնավորելու համար գալիքի մեր հույսերը, մեր ձգտումներն ու նպատակները: **Հայրենիքի շուրջ համայն**

20 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 38:

**հայության համախմբումը երաշխիքն է ազգային մեր կյանքում դժվարությունների ու փորձությունների հաղթահարման, մեր հաղթանակների, մեր հարատևության**»[21]: Հայրապետը նկատում է, որ համագործակցության նշված ուղենիշների իրագործումը չի կարող միահարթ լինել, քանի որ Հայրենիքի շուրջ հայության համախմբումն անհրաժեշտորեն պահանջում է հաշվի առնել Սփյուռքի բազմաղենմությունն ու բազմամակարդակ կացությունը: Եւ Վեհափառի համոզումն այն է, որ այդ նպատակների իրագործման առաջնային եւ շարժիչ ուժ պետք է դառնան միասնացմանը միտված ազգային իղձերը եւ ձգտումները, որոնց համակարգված եւ գործուն ազդեցությունը որակվում է որպես հայ ժողովրդի առջեւ կանգնած հիմնախնդիրների լուծման երաշխիք: Ահա թե ինչու նա լիահույս է, «... որ **միայն հայրենաբնակ եւ սփյուռքահայ Մեր զավակների համախումբ ու միաբան ջանքերով պիտի կարողանանք հաղթահարել ներկա պայմաններում մեր ժողովրդին բաժին հասած փորձությունները**՝ ի սեր հայոց պետականության զորացման եւ ազգային մեր նվիրական իղձերի ու տեսիլքների իրագործման»[22]:

Ազգընտիր Նվիրապետի իրավունքով Վեհափառ Հայրապետը հորդորում է նաեւ Հայրենիք-Սփյուռք առնչություններում խստիվ բացառել խտրական կամ հատվածապաշտ մոտեցման ցանկացած փորձ կամ դրսեւորում: Ահա թե ինչու համազգային հարաբերությունների ծավալման եւ գործակցության նրա առաջադրած մանրակերտի հիմքում ընկած են համահավասարության, հայ ժողովրդի համազգային մտածելակերպ ձեւավորելու եւ համազգային նշանակության այլ առաջնահերթությունների սկզբունքները:

Ի մի բերելով այդ ամենը կարող ենք վստահաբար պնդել, որ Հայրենիք-Սփյուռք բազմահարթ հարաբերությունների եւ արդյունավետ համագործակցության մասին Ամենայն Հայոց Բարեգին Բ Կաթողիկոսի հայեցակարգում **ցեղասպանությունից փրկված եւ աշխարհասփյուռ հայության կենտրոնաձիգ եւ համախմբող ուժ է համարվում ազգային անկախ պետականությունը**: Հայոց պետությունը պետք է խարսխի Մայր Հայրենիքը եւ Սփյուռքը, այսպիսին է Վեհափառ Հայրապետի հիմնարար եզրահանգումը, որը փաստվում է վերլուծաբանի ընդհանրացնող հետեւյալ պնդմամբ. «Ցանկացած իրավիճակում որպեսզի առավել լինի մեր պետության դերակատարությունը, մոտ պիտի տեսնենք մեր Հայրենիքը զարգացած ու բարգավաճող երկիր դարձնելու հեռանկարը, որը ինքնին անկախ պետականություն ունենալու նպատակն է՝ ազատության մեջ ստեղծելու ու ստեղծագործելու, կառուցելու բարօր ու ապահով կյանք, ազատորեն արտահայտելու հոգեւոր կենսական ուժերը: **Հայ-**

21 «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 28:
22 «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 28-29:

**բենիքի հզորությունն ու առաջընթացը ուժն ու զորությունն են նաև Սփյուռքի**»[23]: Այդ համատեքստում արժանին պետք է մատուցել Վեհափառի մեկ այլ նկատառմանը ևս՝ այն պնդմանը, որ աշխարհաքաղաքական արդի զարգացումները հրամայաբար պահանջում են առավել արդյունավետ դարձնել փոխադարձության սկզբունքի վրա կառուցվող Հայաստան-Սփյուռք բաց և անկաշկանդ հարաբերությունններն ու բազմահարթ գործակցությունը: Այդ գործընթացում մեծապես կարևորելով ազգային պետականության դերը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հորդորում է մեկտեղել ոգին ու կամքը, ի հայտ բերել և արմատավորել գործակցության նորանոր հորիզոններ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետության բարգավաճմանը: Վեհափառ Հայրապետի հայեցակարգային այդ ըմբռնումների ընդհանրացում կարելի է համարել լուսաբանող այս տողերը. «**Հավատում ենք, որ Մեր զավակները, ինչպես միշտ, նեցուկ պիտի լինեն Հայրենիքին, և մեր ժողովուրդը միասնաբար պիտի շենացնի իր հայրենի տունը, որպեսզի այն միշտ լինի իր հույսի հանգրվանը, ներշնչանքն ու առանցքը հայ կյանքի, համախմբող զորությունը հայության**»[24]:

Քննարկվող համատեքստում հավերժականի, կայունի և փոփոխականի առարկայական ընկալման և արժևորման դիրքերից Վեհափառը հստակորեն միմյանց է շաղկապում հող հայրենիի, ինչպես նաև ազգակրոնական և ազգամշակութային ավանդությունների համադրական միավորման վրա կառուցված ազգային միասնության գործառնական դերի, ավելի ճիշտ՝ **մեկության գաղափարը**: Այս պարագայում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում ազգային և արևմտյան քաղաքակրթական արժեքները համապատեղելու հայ ժողովրդի դարավոր փորձի համակողմանի արժևորումը: Վերլուծական այս ձևաչափի ընտրությունը թելադրված է նաև նրանով, որ արժեքային ըմբռնումներն իրենց հարաբերական բնույթով կարող են արգելակել միասնացման ձգտումները և սահմանափակել միասնացման գաղափարի գործառնության ոլորտը: Այդ իսկ պատճառով այս հարթության մեջ քննարկելով Հայաստան-Սփյուռք առնչությունների հիմնահարցը Գարեգին Բ Կաթողիկոսը առաջադրում և համակողմանիորեն հիմնավորում է **երկկողմանի փոխադարձության** անպայմանավոր անհրաժեշտությունը: Մերժելով միակողմանիության ամեն մի դրսևորում, նա հիմնավորված պնդում է, որ ինչպես Հայաստանն ունի սփյուռքի օժանդակության կարիքը, նույնպես և Սփյուռքն առանց Հայաստանի անօգնական ու միայնակ կլինի բազում մարտահրավերների հանդիման: Ահա թե ինչու Վեհափառը համակողմանի փաստարկված կերպով պնդում և

23 Անդ, էջ 269-270:

24 Անդ, էջ 270:

առաջնային է համարում այն գաղափարը, որ «Մեր կյանքից ներս տեղ չպիտի գտնեն մեր ժողովրդի միասնականությունը վտանգող իրավիճակներ: **Միաբանությամբ կարող պիտի լինենք օրինյալ կյանքով հարատևել, կենսունակ պահել հայ Սփյուռքը և աշխարհասփյուռ մեր կյանքը զորություն դարձնել Հայրենիքին**: Միաբանությամբ կարող պիտի լինենք բարի ավարտի առաջնորդել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խնդրի խաղաղ կարգավորումը, հաղթանակած տեսնել մեր արդար դատը, Հայոց ցեղասպանության ճանաչումը: Իմաստունի կողմից հնուց ասված ճշմարիտ խոսք է՝ «Միաբանությամբ փոքրերը մեծանում են, անմիաբանությամբ՝ մեծերը՝ փոքրանում[25]:

Հայրենիք-Եկեղեցի-Սփյուռք զուգորդության՝ Վեհափառի հայեցակարգում մեծ տեղ է հատկացվում նաև սփյուռքահայ համայնքների շահերի և իրավունքների պաշտպանության հիմնախնդրին: Նրա հայեցակարգում իրատեսորեն է արժևորվում նաև այն փաստը, որ **ընդհանրություններով և տարբերություններով հանդերձ սփյուռքահայության համայնական կյանքը ոչ միայն կայացած իրողություն է, այլև պատմական անցյալը և ներկա զարգացումները շաղկապող յուրատիպ գոյավիճակ է**: Միաժամանակ, անաչառ և հավասարակշռված մոտեցմամբ վերլուծաբան Հայրապետն անդրադառնում է նաև այն իրողությանը, որ արդիականության հասարակական, քաղաքական, տնտեսական ու քաղաքակրթական գործոնների ազդեցությամբ սփյուռքահայ համայնքներում տեղ են գտել նաև այնպիսի երևույթներ, որոնք առաջնահերթ են դարձնում ազգապահպանության հարցերը: «Ներկայիս, երբ մեծ տեղաշարժեր են ընթանում Սփյուռքի համայնքներում, - այդ կապակցությամբ գրում է Վեհափառը, - նվազում են որոշ գաղթօջախներ, ձևավորվում նորերը, հրատապ է դառնում ընթացող տեղաշարժերին համարժեք ազգապահպան նոր կառույցների ստեղծումը, նոր եկեղեցիների, դպրոցների կառուցումը, կրթության լիարժեք կազմակերպումը, հրատապ է նաև մեզ ժառանգություն մնացած եկեղեցական կյանքը հուզող անբնական վիճակների հաղթահարումը»[26]:

Քննարկվող հայեցակարգում ընդհանրացնող այդ մոտեցման հենքի վրա են կառուցվում նաև ազգային միասնության և ազգապահպանության գործում հավատի, հոգու և հայրենասիրության զուգորդության հիմնահարցերը: Հայրապետը շեշտում է, որ այդ եռամիությունը անուրանալի դեր է կատարում ազգի գոյատևման և զարգացման համար անհրաժեշտ մրցունակ պայմանների ձևավորման, ինչպես նաև համազգային ուժերի համախմբման հարցում: Այդ գործընթացում կարևորելով համագործակցության դերը, վերլուծաբանը միա-

25 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Հայրենիքի պաշտոնականք, էջ 261-262:
26 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հայրենիքի պաշտոնականք, էջ 269:

ժամանակ մատնանշում է, որ վերջինիս ոլորտները ոչ միայն պետք է միտված լինեն մեր ավանդական կենսակերպի պահպանմանն ու վերարտադրությանը, այլեւ լուրջ կռվաններ պետք է դառնան արդի մարտահրավերների դեմ: Ահա թե ինչու այդ ամենի համակողմանի արժեւորման դիրքերից Վեհափառը սփյուռքահայությանը հորդորում է. «Սիրելի բարեպաշտ, հավատավոր հայորդիք, Հայրապետական Մեր հորդորն ենք բերում, որ դուք զորացյալ պահպանեք ձեր հավատքի կյանքը, նույն նվիրումով ու սիրով շենացնեք ու պայծառացնեք եկեղեցական եւ ազգային հաստատությունները, որպեսզի ձեր կյանքը զարդարեն նոր բարի արդյունքներ, լուսավորության ու առաջընթացի բարձունքներ, որոնցով Մենք պիտի ուրախանանք ու մխիթարվենք Սուրբ Էջմիածնում եւ մեր ժողովուրդը՝ ի սփյուռս աշխարհի: Առեք Աստծո սպառազինությունը, հաստատուն կանգնեք, ձեր ոտքերը ամրացրեք խաղաղության Ավետարանի պատրաստությամբ, առեք հավատի վահանը, փրկության սաղավարտն ու հոգու սուսերը, որ է Խոսքն Աստծո, որպեսզի Տիրոջով օրհնյալ լինի մեր կյանքը եւ մեր ընթացքը...»[27]: Վեհափառի հայեցակարգն, անշուշտ, հաշվի է առնում անհատի ինքնորոշման եւ ազատության անկապտելի իրավունքները, բայց միաժամանակ պատմական փորձի ընդհանրացմամբ հիմնավոր կերպով ցույց է տալիս նաեւ, որ **այդ հարցում հավասարապես պետք է առաջնորդվել նաեւ բարոյական պատասխանատվության գիտակցությամբ**, որը նույնպես կարեւորագույն դեր ունի կատարելու ազգային եւ անհատական գործունեության կարգավորման գործում: Եւ քանի որ Գարեգին Բ Վեհափառի հայեցակարգում աստվածաբանական մոտեցմամբ բարոյական պատասխանատվության զգացումը սերտորեն շաղկապվում է հավատքին, մեկ անգամ եւս կարեւորելով հավատքային գործոնի դերը՝ նա հավելում է. «**Մեր հորդորն է, որ միշտ անմար պահեք հավատո կանթեղը առաքելապատիվ Լուսավորիչ մեր Հայրապետի, որդիական նույն նվիրումով սիրեք անկախ մեր Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին**, համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Եւ ձեր հավատն ու սերը պիտի փոխանցվեն մեր զավակներին սերնդեսերունդ, որ լինեն կրողները հոգեւոր շնորհների, զորությունը մեր Եկեղեցու՝ Աստծո օրհնության մեջ»[28]:

Ազգընտիր հոգեւոր առաջնորդի իրավունքով հավաստելով, որ «Հայրենիքում եւ Սփյուռքում մեր Եկեղեցին պիտի շարունակի լինել հավատի լուսավոր ու պայծառ ակունք, մեր հայրենյաց ավանդներով սնուցող ակունք, ինչպես եղել է իր գոյության ողջ ընթացքում, դարեր շարունակ, փորձությունների ու նեղություններ ի մեջ, նախապակությունների ճանապարհին, պիտի լինի այսօր, երբ հայոց

27 «Էջմիածին», 2006, Զ, էջ 36-37:
28 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 9:

երկնքում փայլում է հույսի աստղը»[29], Գարեգին Բ Վեհափառը միաժամանակ համայն հայության ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ «Նոր հույսերով է լեցուն այսօր ազգային-եկեղեցական մեր կյանքը: Մեր ազատ Հայրենիքի վերաշինության, շեն, բարգավաճ եւ հզոր ապագայի հույսերով, Արցախի արդար դատի հաղթանակի, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման հույսերով: **Հույսերով ու ձգտումներով մեր Հայրենիքի ու համայն Սփյուռքի միացյալ, ներշաղախ ու զորեղ կյանքի: Ապավինած Աստծուն մեր հայրերի, հավատը մեզ առաջնորդություն ու զորություն դարձրած՝ պիտի մարմնավորենք մեր բոլոր լուսաշող երազներն ու հույսերը**»[30]: Այդ ամենը հավաստում են, որ Հայ Եկեղեցին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների եւ գործակցության, ինչպես նաեւ հայության համախմբման կարեւորագույն գործոններից մեկը համարելով հանդերձ, **Վեհափառ Հայրապետը Եկեղեցու ազգապահպան եւ միավորիչ գործառույթը սերտորեն շաղկապում է ազգային պետականության գոյության եւ գործունեության հետ**: Եւ քանի որ նա լիահույս է, որ Հայաստանում եկեղեցի-պետություն համագործակցությունը դուրս է ժամանակային գործոնի ազդեցությունից, համայն հայության եկեղեցասիրության կոչ անելով գրում է. «Մենք բոլորս այսօր Հայաստանում եւ Սփյուռքում լի ենք լավատեսությամբ: Մենք ունենք վստահությունը ցեղասպանություն վերապրած ժողովրդի եւ լեցուն ենք հույսերով պետականությունը վերականգնած ու Արցախի ազատությունը պաշտպանած սերնդի: Հայրապետիս հրավերն ու պատգամն է՝ վերստին ու միշտ մեր գործերով պանծացնենք Հարուցյալ Խաչը Քրիստոսի: **Կանգուն ու պայծառ պահենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, որպեսզի Տերունական Սուրբ Խաչի զորությամբ միշտ օրհնյալ լինի մեր կյանքը, եւ միշտ կեցցե Մայր Հայաստան**»[31]:

Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ սփյուռքահայության ազգապահպանության գործում Վեհափառ Հայրապետը հայեցի կրթությունը կարեւորում է մի շարք տեսանկյուններից: Այդ կապակցությամբ վերլուծաբանն ամենից առաջ փաստում է այն իրողությունը, որ իր դժվարին պատմության ընթացքում հայրենի երկրից բռնի վտարված նախանձախնդիր սփյուռքահայության համար ամենուր առաջնային խնդիր է համարվել. «... կառուցել լուսո խորանը մեր Սուրբ Եկեղեցու, եւ նրա կողքին հայոց դպրության, հայոց դպրոցի լուսո խորանը, որպեսզի քրիստոնեական Ավետարանի լույս պատգամների հետ նաեւ հայոց բանն ու բառը, հայոց գիրը լուսավորի միտքն ու հոգին մեր ժողովրդի զավակաց»[32]: Գարեգին Բ Կաթողիկոսը սփյուռքահայ

29«Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 52-53:

30«Էջմիածին», 2005, Ե, էջ 26:

31 «Էջմիածին», 2004, Ե, էջ 50:

32 «Էջմիածին», 2000, Ժ, էջ 12:

դպրոցի ազգապահպան առաքելությունը մեծապես գնահատում է նաեւ այն տեսանկյունից, որ չնայած վերջինս ենթակա է մշակութային ու քաղաքակրթական տարբեր ազդեցությունների, այդուհանդերձ շարունակում է իր հայապահպան առաքելությունը եւ սփյուռքահայության ազգապահպանության երաշխավորներից է: Վեհափառ Հայրապետի աշխարհայացքային լայնախոհությանը բնորոշ է նաեւ այն, որ նա ի խորոց սրտի գնահատելով արտերկրի հայության դպրոցաշինության ջանքերը, այն միաժամանակ որակում է որպես «համայնքային կյանքի բարեզարդում»[33]: Եւ մասնակից դառնալով այդ գործընթացների ծավալմանը, Գարեգին Բ Հայրապետն անձնական ջանքեր է ներդնում Մայր Հայրենիքի եւ Մայր Աթոռի աջակցությունը սփյուռքահայ դպրոցի պահպանմանն ու զորացմանը ծառայեցնելու, ինչպես նաեւ՝ փոխադարձ հարաբերությունների սերտացմանը եւ մերձեցմանը: Դրանով է պայմանավորված նաեւ այն, որ Սփյուռք կատարվող հովվապետական այցերի ծրագրային հանդիպումներում անփոփոխ կերպով առկա է նաեւ սփյուռքահայ դպրոցը: Ահա թե ինչու ազգանվեր Հայրապետը փաստում է. «Հայրապետական Մեր ուղեւորությունների ընթացքում առանձնակի սիրով ենք այցելում հայկական դպրոցները, որոնք ճանաչողություն ու լույս են սերմանում մեր զավակների հոգում եւ փոխանցում նրանց ոսկեղենիկ մեր մայրենին, մեր պատմությունն ու հայրենի սրբությունները»[34]:

Այդ տեսանկյունից հիմնահարցին Վեհափառ Հայրապետի արժեքային մոտեցումների փրամաբանական օրինաչափ արդյունքը պետք է համարել սփյուռքահայ ազգային կրթօջախների ազգանվեր գործունեության գնահատմանը միտված հետեւյալ տողերը. «**Մենք բարձր ենք գնահատում արդյունավետ գործունեությունը Սփյուռքի մեր վարժարանների ու կրթական հաստատությունների, որոնց առաքելությունն առավելաբար միտված է մայրենի լեզվի ուսուցմանը, հայեցի սերունդ կրթելուն ու դաստիարակելուն՝ որպես անխախտ գրավական աշխարհասփյուռ մեր ժողովրդի ազգային ինքնության պահպանության**»[35]: Օրինակելի նախաձեռնություն պետք է համարել նաեւ հետեւյալը. անկախ այն բանից, թե ինչ միջավայրում է գործում սփյուռքահայ դպրոցը, Վեհափառը բարձր է գնահատում նրա առաքելությունը եւ մատնանշում, որ ազգային կրթությամբ սփյուռքահայությունը մեծապես կարեւորում է «... նոր սերնդի հայեցի կրթության գործը, մայրենի լեզվի ուսուցանումը, մեր հայրերի սրբազան ժառանգությամբ ու ավանդներով դաստիարակումը:

33 Այդ են վկայում ավստրալահայ համայնքին ուղղված Վեհափառի հետեւյալ տողերը «... դուք բարեզարդում եք համայնքային ձեր կյանքը եւ մեծ ուշադրություն դարձնում նաեւ նոր սերնդի քրիստոնեական եւ հայեցի դաստիարակությանը, ինչի վկայությունն են թեմում գործող դպրոցներն ու կրթօջախները». «Էջմիածին», 2006, Թ, էջ 10-11:

34 «Էջմիածին», 2004, Ե, էջ 37:

35 «Էջմիածին», 2006, Թ, էջ 12:

- Նաեւ այն պատճառով, որ ազգային դպրոցում, - ... հավատքի հետ մեկտեղ նաեւ մեր Մայր Հայրենիքի սերն ու կարոտն եք փոխանցում ձեր զավակներին, քանզի ինչպես բույսն է սնվում արմատներով եւ ապա ճյուղերը զորանում են, ծաղկում ու պտուղներ բերում, այդպես էլ հայրենական մեր արժեքներով, Հայրենիքով, Սուրբ Էջմիածնի լույսով եւ մեր եկեղեցիներից բաշխվող օրհնությամբ զորանում են մեր աշխարհասփյուռ հայորդիները, հաստատուն մնում «ի հաւատ, ի յոյս, ի սէր», եւ նրանց գործոց բարի պտուղներով պայծառանում է համայն հայությունը»[36]:

Գարեգին Բ. Վեհափառի հայեցակարգային ընբռնումների վերլուծությունը միանգամայն ակնհայտ ցույց է տալիս, որ Հայրենիք-Սփյուռք առնչությունների ծավալման, ինչպես նաեւ սփյուռքահայության ազգապահպանության, հայեցի կրթության ու դաստիարակության առաջնահերթությունների լուծման կարեւորագույն գործոն է համարում նաեւ **ընտանիքը**: Այդ կապակցությամբ Վեհափառը գրում է. «Մեր ժողովուրդը ընտանեկան առաքինի կյանքը նկարագրել եւ շրջագծել է «ընտանեկան սրբություն» բնորոշմամբ: Սրբությունը Աստծո ստորոգելին է եւ Նրանից է միայն բխում ու տարածվում: ... Մեր ժողովրդի համար հայ ընտանիքը նույնպես սուրբ է, որովհետեւ ստեղծողն Ինքն Աստված է: Ընտանիքի միջոցով Աստված կյանք պարգեւելով՝ տնօրինել է, որ այդ միջավայրի մեջ, հավատքի, հույսի եւ սիրո առաքինություններով մարդը աճի եւ զարգանա՝ ընթանալով դեպի բարին ու կատարյալը: Այդ է ընտանիքի սուրբ նկարագիրն ու առաքելությունը»[37]: Վերլուծաբանը նրբորեն նկատում է նաեւ, որ սրբության նման ընկալմամբ էլ հայերի համար «Ընտանիքը միշտ նկատվել է ինչպես Եկեղեցու, նույնպես եւ արդար հասարակական կյանքի հիմքը եւ հանդիսանում է հոգու սնուցման ու ներշնչանքի առաջին աղբյուր, ազնիվ ու անկեղծ հոգածությամբ՝ կրթիչ եւ դաստիարակիչ միջավայր: Այն բոլոր արժեքները, որ կազմում են ընտանիքի հոգին, փոխանցվում են զավակներին, նաեւ՝ ազնվություն, արդարություն, ճշմարտասեր հոգի, աշխատասեր կամք ու արժանավոր նպատակի նվիրում, շնորհներ, որոնցով կենդանի է մարդու հոգին եւ ոչ մեռած: Ինչպես Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսն

36 Անդ, էջ 11: Այդ նպատակին է ծառայում նաեւ սփյուռքահայության նոր սերնդին ուղղված Վեհափառի հետեւյալ հորդորը. «Սիրելի երեխաներ, Մենք եկել ենք Հայաստանից, որը Հայրենիքն է բոլոր հայերի, եւ որի մասին հաճախ լսում եք ձեր ուսուցիչներից ու ծնողներից: Նրանք ուզում են, որ դուք նույնպես շատ սիրեք Հայաստանը, որը հնագույն երկրներից մեկն է աշխարհի, ծանոթ լինեք ու սիրեք մեր պատմությունը, հարուստ մեր մշակույթը». «Էջմիածին», 2004, Ե, էջ 37: Այդ համատեքստում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով սփյուռքահայ ուսուցիչների «օրհնաբեր աշխատանքը» մատնանշում է նաեւ. «Ամեն ինչ, որ անում ենք մեր կյանքում, պիտի ինքներս մեզ հաշիվ տանք, թե ինչ անդրադարձ է ունենում մեր երեխաների վրա՝ նրանց բարությա՞ն է մղում, նրանց քայլերը ուղղում է եւ հեռացնո՞ւմ խոտոր ճանապարհներից, թե՞ հակառակը: Եւ ես այսօր շատ ուրախ եմ՝ համոզվելով, որ այս հեռավոր երկրում մեր զավակների ազգային-հոգեւոր դաստիարակությունը հոգատար եւ խնամածու ձեռքերում է գտնվում», «Էջմիածին». 2002, ԺԱ-ԺԲ, էջ 18:

37 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 46-47:

է ասել. «Հայ ընտանիքը Եկեղեցու մանրանկարն է, որի առաջին պաշտոնյան մայրն է»[38]: Հայեցի դաստիարակության եւ ազգապահպանության գործում մեկ անգամ եւս շեշտելով ընտանիքի դերը, վերլուծաբանը վկայակոչելով Գարեգին Հովսեփյան Հայրապետի «Հայ ընտանիքը եկեղեցի է, որի սրբազան քահանան հայ կինն է» բնորոշումը՝ արժանին է մատուցում «ընտանեկան սրբության» պահապան հայ կնոջը եւ հայ մայրերին, ինչը կարելի է փաստել վկայակոչելով Հայրապետական գնահատանքի հետեւյալ տողերը. «... Մենք ուրախ ենք, որ անձամբ կարող ենք շնորհավորել ու Մեր բարեմաղթանքները բերել ձեզ, սիրելի հայ մայրեր եւ մանավանդ ասել, որ ձեր ձեռքում է մեր ժողովրդի ապագան: Կրթեք ձեր զավակներին աննահանջ հավատով, դեպի ազգայինը, դեպի հայ դպրոցը սիրով ու հավատարմությամբ, որոնցով պիտի գտնեն իրենց երջանկությունը եւ որոնցով պիտի հարատեւի մեր ժողովուրդը»[39]:

Եւ քանի որ ուսումնասիրվող հայեցակարգում սփյուռքահայության միասնության, ազգապահպանության եւ Հայրենիք-Սփյուռք կապերի հոգեւոր խորհրդանիշ է համարվում Հայ Առաքելական Եկեղեցին, Վեհափառ Հայրապետն այդ գործընթացները դիտարկում եւ արժեւորում է նաեւ **եկեղեցի-դպրոց-ընտանիք եռամիության** դիրքերից: Փաստելով, որ «Դարեր շարունակ Եկեղեցու հովանու ներքո են գործել հայոց կրթարանները, եւ այսօր եւս մեր Սուրբ Եկեղեցին զորավիգ ու աջակից է հայ կրթօջախների շնորհակալ առաքելության իրականացմանը»[40], Հայոց ընդհանրական Նվիրապետն այդ գործընթացում մեծապես կարեւորում է եկեղեցի-դպրոց-ընտանիք միության ներքին կապը՝ **Հայ Եկեղեցու միավորիչ դերը**: Եւ այդ դիրքերից վերլուծաբանը նշված եռամի համակարգին առաջնահերթ կարեւորություն է վերագրում նաեւ այն տեսանկյունից, որ «**... քրիստոնեական մեր հավատքը եւ այդ հավատով զորացած հայ ընտանիքն են եղել մեր ժողովրդի գոյատեւության երաշխիքը**: Այս նպատակով **Մենք բարձրորեն գնահատում ենք ընտանեկան հարկերից ներս լուսավորչյան կանթեղի հավատափյուռ լույսը զորավոր պահելու եւ հայ ընտանիքի ու Եկեղեցու միասնությունն ամրապնդելու աշխատանքները**»[41]: Վեհափառ Հայրապետը մատնանշում է նաեւ, որ այդ գործընթացում համաձայն ազգային պետականության Հայ եկեղեցին ունի արդյունավետ հոգեւոր ծառայության եւ դաստիարակչական գործունեության հզոր աջակից:

---

38 Անդ, էջ 46:

39 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Հայրենիքի պաշտոնականք, էջ 79:

40 «Էջմիածին», 2006, Թ, էջ 13:

41 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 23: Վեհափառի հայեցակարգի բնորոշ գծերից մեկն էլ պետք է համարել այն, որ նա **սփյուռքահայ ընտանիքների կյանքի պատմությունը նույնացնում է թեմի պատմության հետ** եւ փաստում, որ այդ պատմությունը «... սկիզբ է առնում պանդխտության մեջ ձեր հայրերի փքնաջան աշխատանքով, արդար վաստակով եւ այդ վաստակի արդյունքը Հայ Եկեղեցուն, հայ դպրոցին, ազգային խնամատար ու մշակութային հաստատություններին ընծայաբերումով, զոհողությամբ ու անմնացորդ ծառայությամբ ազգային կյանքին»,անդ, էջ 15-16:

Եւ այդ հիման վրա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սփյուռքահայության միասնության եւ ազգապահպանության գործում եկեղեցի-դպրոց-ընտանիք եռամի գործառնության արդյունավետությունը սերտորեն շաղկապում է Մայր Հայաստանի եւ ազգային պետականության հետ: Այդ տեսանկյունից հատկանշական է, որ սփյուռքահայությանն իր օրհնությունը բերելով՝ Վեհափառը նախ հավաստում է. «... Մեր հոգու ուրախությունը աղոթք դարձավ դեպի երկինք բարձրացող, հայցով, որ Աստծո օրհնությունը միշտ ձեզ հետ լինի ու սերը միշտ ձեր մեջ իշխի»[42] եւ ապա հորդորում՝ «Սիրելի զավակներ մեր, Խաչին ապավինությամբ մեր ժողովուրդը վերահաստատել է անկախ պետականությունը Հայաստանի: **Այսօր առավել ամուր ու սերտ են կապերը Հայրենիքի ու Սփյուռքի միջեւ, եւ Սուրբ Էջմիածնով ճառագող մեր հավատքն է կամրջում ազգս հայոց: Ազգովի շատ իղձեր ու նպատակներ ունենք, որոնց իրականացման ճանապարհը պիտի անցնենք այդ նույն հավատքով, «Խաչ քո եղիցի մեզ ապաւէն» մեր դարավոր աղոթքով, մեր հայրերից ժառանգություն ստացած միաբանության սուրբ ուխտով, հանձնառությամբ, նվիրումով ու սիրով:** Գիտենք եւ զգում ենք հոգով, որ ազգասեր ու եկեղեցասեր հայորդիներիդ սրտերում մշտավառ է սերը հանդեպ համազգային մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի լուսավորչատեսիլ երկնահեղ լույսը պայծառ լուսավորում է հավատավոր ուղին աշխարհասփյուռ մեր ժողովրդի»[43]: Մեծ կարեւորության փաստերից հաջորդն այն է, որ քննարկվող հիմնախնդիրների վերլուծական գնահատումներում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադառնում է նաեւ այդ գործընթացների դեմ ուղղված մարտահրավերների քննական արժեւորմանը:

Վեհափառի համար գաղտնիք չէ, որ համընդհանրության գործընթացներով կյանքի կոչված եւ արդի հասարակական կյանքում տեղ գտած մարտահրավերներն ուղղակի կամ միջնորդավորված կերպով ուղղված են նաեւ ավանդական հոգեւոր աշխարհի դեմ: Եւ դա է պատճառը, որ քննական անդրադարձ կատարելով այդ երեւույթներին, վերլուծաբանը միանգամայն հիմնավոր արձանագրում է, որ «**Արդի համընդհանրության գործընթացները կարող են համամարդկային նպատակների ծառայել, ստեղծել մնայուն ու ժողովուրդներին փոխադարձաբար իրար կապող արժեքներ ոչ թե ազգային մշակույթների տարբերակիչ հատկանիշների ոչնչացմամբ, այլ մշակութային ու արժեքային հաղորդակցությամբ եւ փոխհարստացմամբ**»[44]: Հակառակ պարագային, ինչպես իրավամբ նկատում է Վեհափառը, ազգային ինքնության ոլորտում եւ հոգեւոր-մշակութային կյանքում կարող են տեղ գտնել

42 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պատգամների, էջ 80:

43 «Էջմիածին», 2006, Զ, էջ 26-27:

44 «Էջմիածին», 2005, Զ, էջ 38:

«անցանկալի հոգեզուրկ ընթացքներ», որոնք վերջին հաշվով կարող են հանգեցնել նաեւ «ազգային-քրիստոնեական ոգու, ազգային գաղափարների ու տեսլականի մթագնման»: Եւ այդ ամենի համակողմանի եւ ընդհանրացված վերլուծությամբ հայոց ազգընտիր Հայրապետը փաստում է. «Ամենամեծ վտանգը, որ կարող է սպառնալ ազգին եւ հասարակությանը, բարոյական ուժերի կորուստն է: Արդիականության հոգեզուրկ ընթացքների ու մեր դժվարությունների առջեւ՝ Հայաստանում թե Սփյուռքում մենք առիթն ունենք անհանգստանալու հոգեւոր-բարոյական արժեքների խաթարումից, քրիստոնեական-ազգային ոգու, գաղափարի ու տեսլականի մթագնումից, երբ ճանապարհը դառնում է դեպի փակուղի առաջնորդող անձնակենտրոն ապրույտ»[45]: Խնդրո առարկա հիմնահարցերի վերլուծական արժեւորմամբ նա նրբորեն նկատում է, որ «գերարդիական» որակավորմամբ մատուցվող «նոր արժեքները» ոչ միայն միտված են ազգային-քրիստոնեական ոգու, ազգային գաղափարների ու տեսլականի մթագնմանը, այլեւ ուղղորդված են դեպի հասարակության առավել խոցելի հատվածը՝ աճող սերնդին եւ երիտասարդությանը, որի մասին գրում է. «Այսօր վտանգի առջեւ է մեր երիտասարդությունը. այդ վտանգն անհավատությունն է, անտարբերությունը հավատքի նկատմամբ, այդ վտանգը զվարճանքի եւ հաճույքի, Քրիստոսի պատվիրանների վրա չխարսխված կյանքի հրապույրներն են, դրսից ներթափանցող նոր արժեքային ընկալումներն են, որոնք որ գալիս են մեր Եկեղեցու զավակներին հեռացնելու իրենց հայրերի սուրբ հավատքից ու հայրենական արժեքների ընկալումից»[46]:

Արդի մարտահրավերներին դիմադարձելու գործում Եկեղեցու ծառայական դերը Վեհափառը տեսնում է նաեւ հայ համայնքների առջեւ ծառացած հոգեւոր-մշակութային խնդիրների լուծմանը միտված ջանքերի մեջ: Իբրեւ Հայ Եկեղեցու բարձրագույն Նվիրապետ նա վստահ է, որ «... **մեր Եկեղեցու Նուիրապետութեան Աթոռները, բոլոր թեմերը՝ որպէս մէկ արմատի բազկատարած ճիւղեր, կարող պիտի լինեն լիարժէք արդիւնաւորումով ծառայել մեր Ժողովրդին**»[47]: Միաժամանակ նրա վերլուծական տեսադաշտից չի վրիպել նաեւ այն, որ սփյուռքի միջհամայնքային կապերի ամրապնդման եւ զարգացման, համայնքների միջեւ կազմակերպված եւ արդյունավետ համագործակցություն ծավալելու եւ ընդլայնելու, միասնաբար ազգամշակութային գործունեություն ծավալելու, ինչպես նաեւ սփյուռքահայության ազգային կյանքի վերարտադրության համար Հայ Եկեղեցին «ներքին կեանքի նորոգութեան» եւ այդ ոլորտում հոգեւոր ծառայության եւ կյանքի կազմակերպման արդյունավետ միջոցների ներդրման կարիք ունի: Այդ ամենի ընդհանրացմամբ

45 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Հայրենիքի պաշտոնականք, էջ 266:

46 «Էջմիածին», 2004, Բ-Գ, էջ 171:

47 «Էջմիածին», 2000, Բ, էջ 8:

էլ Վեհափառը նշում է. «Այսօր Սփյուռքի հայության կարեւորագույն հրամայականը ծխական կյանքը ազգային կյանքի կենտրոն դարձնելն է՝ լինի կանոնադրական, ծխական բարեփոխման, արդյունավետ հովվական ծառայության, տեխնիկայի արդի հնարավորությունների օգտագործման, ընդդեմ նյութականացման՝ հոգեւորի զորացման, թե այլ միջոցներով»[48]: Նա լիահույս է նաեւ այն արտաքին մարտահրավերներին դիմադարձելու եւ ներքին կյանքի նորոգության բարեհաջող ընթացքի մեջ, որի հիմք է համարում այն իրողությունը, որ «Այսօր հոգեւոր վերազարթոնք է ապրում աշխարհասփյուռ մեր ժողովուրդը: Հարուցյալ է հոգին մեր ժողովրդի: Նոր ձեռքբերումների ու պայծառ գալիքի հույսն է թեւածում հայոց երկնակամարում: Հավատաշեն գործերով, քրիստոնեական կրթությամբ, եկեղեցաշինությամբ, ազգանպաստ բազում ազնիվ իրագործումներով բարեզարդվում է մեր հոգեւոր ու ազգային կյանքը, ամրապնդվում հավատավոր ոգին մեր ժողովրդի»[49]: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ եւ տրամաբանական պետք է համարել այն, որ համազգային առումով ազգամշակութային գործունեություն ծավալելու, հավասարապես նաեւ սփյուռքահայության ազգային կյանքի վերարտադրության համար վերլուծաբան Հայրապետը հորդորում եւ կոչ է անում «... ընթերցել Ավետարանն ու Աստվածաշունչը ոչ թե որպես գիրք նվիրական ու սուրբ, այլ **Տիրոջ յուրաքանչյուր խոսք դարձնել կյանք եւ կյանքի ուղենիշ, ու այդ պահին մենք կկարողանանք իրապես նաեւ մեր պարտքը կատարել մեր հայրենիքի առջեւ, կկարողանանք հայրենիքը շեն ու պայծառ դարձնել, զորեղ Հայաստան՝ հավերժական մեր ժողովրդի զավակաց համար**»[50]:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների վերլուծական մոտեցումներում Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը մեծ տեղ է հատկացնում նաեւ **ազգային միասնականության** եւ Հայրենիք-Սփյուռք համատեղ գործակցության հարցերին: Նա նրբորեն նկատում է, որ ընդունող երկրների հասարակական, տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում հայկական համայնքների դերն ու նշանակությունը առավել շոշափելի կլինի, եթե համահայկական արմատական հիմնախնդիրների լուծման գործում հավատքով շաղախված Սփյուռքի ներուժը հստակորեն ներդաշնակեցվի եւ օրգանապես միավորվի Մայր Հայաստանի հայապահպան քաղաքականության հետ: **Վեհափառը Հայրենիք-Սփյուռք միասնության մեջ է տեսնում նաեւ համայն հայ ժողովրդի ներուժի կազմակերպված եւ ուղղորդված գործունեությունը**: Ահա թե ինչու համազգային այդ խնդիրների իրագործման եւ արդի քաղաքակրթական մարտահրավերներին դիմադարձելու գործում Վեհափառը մեկ անգամ

48 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 52:
49 «Էջմիածին», 2006, Ջ, էջ 27:
50 «Էջմիածին», 2000, Ժ, էջ 13:

եւս շեշտադրելով ազգային միասնության, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման եւ միասնացման դերը, գրում է. «**Հայրենիքը եղել ու մնում է հույսը հայության, ներշնչանքն ու զորությունը, պարծանքն ու փառքը**: Վերականգնած հայրենի պետականությունը, Հայաստանի ու Արցախի լուսավոր գալիքով վերածնված, աշխարհասփյուռ իր կենսական ուժերով միասնական՝ մեր ժողովուրդը կերտելու է իր կյանքի վերածնունդն ու հարատեւությունը: **Նվիրումով ու համապետ պիտի շարունակենք ջանալ, որպեսզի Աստծո օրհնությամբ իրավական ճանաչում գտնի արցախահայության ազատ ապրելու իրավունքը, հաղթանակի մեր արդար դատը: Համապետ ուժերով պիտի հասնենք նաեւ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանը, որում իր կարեւորությամբ պատմության գնահատանքին է արժանի ամերիկահայության ներդրումը**»[51]:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների, համայն հայության միասնացման եւ ազգային զարթոնքի Վեհափառ Հայրապետի գնահատումներում ուրույն տեղ է գրավում նաեւ հայրենադարձության հիմնախնդիրների մեկնաբանությունը: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս փաստական նյութը, այս հարցում վերլուծաբանի հայեցակարգային մոտեցումներն ուղղակի հակադիր են հայրենադարձությունը «սփյուռքաթափությանը» նույնացնելու տեսակետին: **Վեհափառ Հայրապետը հայրենադարձության հիմնախնդիրները քննարկում եւ արժեւորում է երկու՝ հոգեւոր եւ իրական մակարդակներում**: Նա «հոգեւոր հայրենադարձություն» է համարում ազգային միասնության, համահայկական հիմնախնդիրների իրագործման հիմքում ընկած Հայրենիք-Սփյուռք երկկողմանի այն հարաբերությունների ամբողջությունը, որի հիմքը «Հայրենիքը իրենց կյանքի մաս դարձնելու, Հայրենիքի կյանքով ապրելու» կարգախոսն է՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Ընդ որում, վերլուծաբանը «Հոգեւոր հայրենադարձության» այդ ըմբռնումը միանգամայն իրագործելի է համարում այն պատճառով, որ «... **այսօր մեր ժողովրդի զավակները ազատ են Հայաստան այցելելու, Հայրենիքը իրենց կյանքի մաս դարձնելու եւ Հայրենիքի կյանքով ապրելու**»[52]: Եւ այդ միասնացման հիման վրա, գրում է նա, պետք է իրականացնել համազգային նշանակության հաջորդ քայլը՝ խթանել մշակութային եւ գիտակրթական միջոցառումների համապետ նախաձեռնությունները, կյանքի կոչել բարեգործական ու տնտեսական նոր ծրագրեր, որոնք նրա համոզմամբ «...**նոր բարի արդյունքներ պիտի բերեն մեր ժողովրդի ազգային զարթոնքին, հոգեւոր հայրենադարձությանը եւ ծառայեն մեր Հայրենիքի հզորությանը, որպեսզի առավել լինեն Հայրենիք վերադարձի հնարավորությունները**»[53]:

---

51 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 53:

52«1946-1948 թթ. հայրենադարձությունը եւ դրա դասերը, հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» (համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու), էջ 6:

53 Անդ

Այսպիսին են հայրենադարձության հարցում Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի **ըմբռնումներն ու ակնկալիքները**: Եւ միանգամայն օրինաչափ է, որ հայեցակարգային այդ ըմբռնումների դիրքերից վերլուծաբան Հայրապետը մատնանշում է նաեւ, որ հայոց համազգային կյանքում հայրենադարձության հիմնախնդիրների լուծումը պետք է դիտարկվի իր հակադրամիասնության մեջ՝ ե՛ւ որպես սփյուռքահայ համայնքների կենսունակության պահպանմանը միտված գործունեություն, ե՛ւորպես կողք-կողքի ու հայրենաշինությանը լծված գործունեություն: Եւ այդ ամենի ընդհանրացմամբ նա պնդում է, որ այդ համատեքստում «... **ավելի հստակ պիտի պատկերացնենք հայրենադարձության հնարավորություններն ու ընթացքները այսօր եւ զորացնենք աշխարհասփյուռ մեր ժողովրդի կապը Հայրենիքի հետ, որով պիտի պահպանվի հայ համայնքների կենսունակությունը**»[54]: Պետք է նկատել նաեւ, որ համազգային շահերի միասնացման, սփյուռքահայ համայնքների կենսունակության եւ սփյուռքահայության առջեւ կանգնած այլ խնդիրների իրատեսական լուծմանն է միտված նաեւ հովվապետական յուրաքանչյուր այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից սերմանվող այդ գաղափարը. «Վերստին, սիրելի ժողովուրդ մեր, բերում ենք ձեզ ողջույն մեր Մայր Հայրենիքից՝ ազատ ու անկախ Հայաստանից: Բերում ենք ձեզ սերը հայրենաբնակ ձեր եղբայրների ու քույրերի, ովքեր համայն հայոց հետ անձկորեն սպասում են այն օրհնյալ օրվան, երբ Տերը շնորհի մեզ համախմբված լինելու հայրենի երկնքի տակ՝ կողք-կողքի ու լծված հայրենաշինությանը»[55]: Համազգային այդ հիմնախնդիրների լուծման գործընթացում Վեհափառ Հայրապետը համահավասար կերպով կարեւորում է նաեւ փոխադարձության օբյեկտիվ անհրաժեշտությունը: Նրա հավասարակշռված մոտեցումներում հետեւողականորեն զարգացվում է այն գաղափարը, որ ներկա պայմաններում ազգային միասնության եւ համահայկական այլ հիմնախնդիրների իրագործման հիմքը ազգային շահերով առաջնորդվող հայոց պետականության ամրապնդումն է եւ հզորացումը: Այդ իսկ պատճառով նա սփյուռքահայությանը կոչ է անում կազմակերպված ձեւով իր ներուժը ծառայեցնել Մայր Հայաստանի հզորացման գործին, առանց որի համազգային ցանկացած հիմնահարցի լուծում ամբողջական լինել չի կարող: Ահա թե ինչու Մայր Հայրենիքի՝ ազատ ու անկախ Հայաստանի սերը սփյուռքահայությանը փոխանցելով՝ Վեհափառն ամենուր հորդորում է. «Եկել ենք սատարումի նոր հորդոր ուղղելու ձեզ: **Հայրենիքը եւ մեր Սուրբ Եկեղեցին դեռեւս զգում են ձեր աջակցության կարիքը: Դեռ անելիքներ ունենք երկրի առաջընթացի, ժողովրդի բարեկեցության, հոգեւոր**

54 Անդ:

55 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հայրենիքը պաշտոնականք, էջ 78: Տե՛ս նաեւ «Էջմիածին», 2004, Ե, էջ 21:

**եւ մշակութային վերազարթոնքի ճանապարհին**: Վերակառուցման ու բարեկարգման կարիքն ունեն բազմաթիվ գյուղական բնակավայրեր, փոփեսապես զարգանալու անհրաժեշտություն՝ սահմանային շրջանները: Դեռեւս բազմաթիվ եկեղեցիներ կան, նաեւ հնագույն ու նշանավոր վանքեր, որ սպասում են նորոգության, բազմաթիվ բնակավայրեր կան, որ չունեն աղոթատներ: Հարկ է լրացնել քրիստոնեական իմացության պակասը, նաեւ շտկել արմատավորված թյուր իմացությունը, միտումնավոր ու սխալ մեկնաբանությունները հավատի ու քրիստոնեության եւ մեր Եկեղեցու մասին»[56]:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Հայրենիք-Սփյուռք առնչությունների Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի առաջադրած հայեցակարգային լուծումներում միանգամայն հստակ կերպով առանձնանում են հիմնահարցի արժեւորմանը միտված մարտավարական այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ Հայաստանի Հանրապետություն-Հայ Եկեղեցի-Սփյուռք եռամիության ամրապնդումը եւ գործակցության նոր պայմաններին համահունչ արդյունավետ համագործակցության հաստատումը, որտեղ մեծապես կարեւորվում է սփյուռքի առջեւ կանգնած մարտահրավերների (ազգապահպանություն, ձուլման վտանգ, համաշխարհայնացման ազդեցությամբ ազգային արժեքներից ապիճանական հրաժարում եւ այլն) հաղթահարմանը միտված գործունեություն, Հայրենի պետության զորացմանը, նրա տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտակրթական ու հոգեւոր առաջընթացին օժանդակելու Սփյուռքի քաղաքականության մշակման աջակցությունը, սփյուռքահայության հայրենադարձության հարցի իրատեսական եւ հիմնավոր լուծումների առաջադրումը եւ հիմնավորումը, Հայ դատի, Հայոց մեծ եղեռնի եւ արցախյան հիմնահարցի միջազգային ճանաչման համար մղվող հետեւողական պայքարը եւ այլն:

56 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 51: